

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի հայրենակիցներ

Արցախյան ազատամարտում ծնունդ առած, հաղթական փառքի ճամփաներով անցած Հայոց բանակը իր վճռական կամքով եւ արիության բազմաթիվ օրինակներով վստահորեն շարունակում է թշնամու ոտնձգություններից անվտանգ ու խաղաղ պահել մեր հայրենիքի սահմանները, ամրապնդել հազարավոր հայ քաջորդիների սխրանքների եւ արյան գնով ձեռք բերված հաղթանակները:

Շնորհավորում եմ ձեզ Հայոց բանակի ստեղծման օրվա կապակցությամբ, ցանկանում խաղաղ երկինք, ընտանեկան ու անձնական երջանկություն, բարօրությամբ ու ստեղծագործ աշխատանքով լի տարիներ, Հայոց բանակին՝ հաղթական փառքի նորանոր բարձունքներ:

Ջերմ մաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան